Կարգապահական գործ թիվ ԿԳ-25063

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՅԱՆԵ ՀԱՄԼԵՏԻ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ Կարեն Բեգլարյանի,

քննության առնելով փաստաբան Գայանե Համլետի Զաքարյանի (արտոնագիր՝ թիվ 432) **(այսուհետ միասին նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Կարեն Բեգլարյանը **(այսուհետև՝ Դիմող),** դիմելով **ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ),** հայտնել է, որ 2023 թվականին դիմել է փաստաբան Գայանե Զաքարյանին, որպեսզի վերջինս ներկայացնի Դիմողին սնանկ ճանաչելու մասին դիմում, քանի որ ունեցել է մեծ դրամական պարտավորություն, իսկ փաստաբանական ծառայության համար վճարել է 500.000 ՀՀ դրամ:

Դիմողի պնդմամբ, ինքը փաստաբանին տեղեկացրել է այն մասին, որ հանդիսանում է բնակարանի 1/3 մասի համասեփականատեր, ինչի կապակցությամբ փաստաբանը նրան տեղեկացրել է, որ եթե իր բաժնեմասը 4.900.000 ՀՀ դրամը չի գերազանցի, ապա սնանկության գործի ընթացքում իր բաժնեմասի վրա բռնագանձում չի տարածվի:

Ըստ Դիմողի, Դատարանի վճռով սնանկ ճանաչվելուց հետո իր բաժնեմասը գնահատվել է մոտ 4.800.000 մլն ՀՀ դրամ, սակայն կառավարչի խոսքերով այն պետք է վաճառվի, որից վերադարձվելու է մոտ 1.600.000 ՀՀ դրամը:

Դիմողը նշել է, որ նշվածից հետո պահանջել է փաստաբանից վերադարձնել

Թիվ ԿԳ-25063-2-Ա
11.06.2025թ.

վճարված գումարը, ինչի վերաբերյալ փաստաբանը հայտնել է իր համաձայնությունը, սակայն մինչ օրս չի վերադարձրել, ինչպես նաև 2024 թվականի դեկտեմբերից չի պատասխանել Դիմողի զանգերին ու հաղորդագրություններին:

Դիմողը 03.03.2025 թվականի բացատրությամբ հայտնել է, որ փաստաբանը եղել է Դիմողի ներկայացուցիչը թիվ ՍՆԴ/0354/04/24 սնանկության գործով, հավելելով, որ ստորագրել է որոշ փաստաթղթեր, որոնց շարքում կարող էր լինել նաև պայմանագիրը, սակայն դրա օրինակը, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք նա հանձնել էր փաստաբանին իր մոտ առկա չէ, իսկ փաստաբանը չի վերադարձրել դրանք:

Ի լրումն նախորդ բացատրության Դիմողը 10.03.2025 թվականի գրությանը կից ներկայացրել է իր և փաստաբան Գայանե Զաքարյանի միջև առկա նամակագրությունը, որոնց բովանդակությունից հետևում է, որ Դիմողը սնանկ ճանաչվելուց հետո ակնկալում էր որոշակի գործողությունների կատարում:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբան Գայանե Զաքարյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 08.04.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը որևէ դիրքորոշում չեն ներկայացրել:

2. <u>Պատասխանողների համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Գայանե Զաքարյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Կարեն Բեգլարյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 03.03.2025 թվականի բացատրությամբ հատնել է, որ Դիմողի շահերի պաշտպանության նպատակով պետք է նախապատրաստեր փաստաթղթեր սնանկության գործընթաց սկսելու համար և ներկայացներ ՀՀ սնանկության դատարան դիմում:

Փաստաբանի պնդմամբ, փաստաբանական հարցումների ու դրանց պատասխանների արդյունքում ակնհայտ են եղել սնանկության հատկանիշները, ուստի կազմել և ՀՀ սնանկության դատարան է ներկայացրել դիմում, ինչից հետո թիվ ՍՆԴ/0354/04/24 սնանկության գործով Դատարանը 16.02.2024 թվականի վճռով Դիմողին սնանկ է ճանաչել:

Ըստ Փաստաբանի, ինքը որևէ արդյունք չի երաշխավորել, հավելելով, որ մշտապես պատասխանում է իր վստահորդների զանգերին, իսկ անհնարինության դեպքում բաց թողնված զանգերից հետո զանգահարում է նրանց:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 08.04.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 14.04.2025 թվականի բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը, հավելելով, որ հանդիսանում է փորձառու փաստաբան, ունեցել է մի շարք դատական գործեր, որոնց արդյունքներով անձինք ճանաչվել են սնանկ:

Փաստաբանը հավելել է, որ կատարել է բոլոր այն գործողությունները, որոնք բխում էին Դիմողի հանձնարարությունից, ինչի կապակցությամբ կնքել էր ծառայությունների մատուցման պայմանագիր և այն մինչ օրս լուծված չէ: Մասնավորապես, Դիմողը սնանկ է ճանաչվել, ուստի պայմանագիրը լուծելու անհրաժեշտություն չի ծագել, Դիմողը կամարտահայտնություն չի հայտնել այն լուծելու մասին:

Փաստաբանը հավելել է, որ 2024 թվականի դեկտեմբերի սկզբից դադարել է պատասխանել Դիմողի զանգերին, քանի որ չէր ունեցել նման պարտավորություն:

Փաստաբանի պնդմամբ, իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը հանձնել է Դիմողին, իսկ իրեն հանձնված բանկային քաղվածքները, Դիմողի ու նրա կնոջ անձնագրերի, ամուսնության վկայականի պատճենները չեն վերադարձվել, քանի որ դրա անհրաժեշտությունը բացակայել է:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 11.03.2025 թվականի թիվ 111-Ա/ԿԳ-25063 որոշմամբ **փաստաբան Գայանե Համլետի Զաքարյանի** նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ **«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.7.1, 2.7.2, 3.1.3, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1,3) ենթակետերի խախտման հատկանիշներով:

17.03.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 16.05.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-8-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 11.06.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ Դիմողի սնանկության գործով, ինչի կապակցությամբ Դիմողը վճարել է Փաստաբանին պահանջված գումարը: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, Դիմողի կողմից ներկայացված նամակագրությամբ, ինչպես նաև թիվ ՍՆԴ/0354/04/24 սնանկության գործով Դատարանի 06.06.2024 թվականի «Վարույթ ընդունելու մասին» որոշմամբ:*

2. Դիմողի և Փաստաբանի միջև հասարակ գրավոր ձևով պայմանագիր չի կնքվել: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի բացատրությամբ: Չնայած Փաստաբանը բացատրությամբ պնդել է, որ պայմանագիրը կնքված է, այնուամենայնիվ, չի ներկայացրել որևէ ապացույց:*

3. Տրված հանձնարարության շրջանակներում Փաստաբանը կատարել է որոշակի հարցումներ, իսկ դրանց արդյունքներով դիմել է ՀՀ սնանկության դատարան: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբան բացատրություններով, ինչպես նաև թիվ ՍՆԴ/0354/04/24 սնանկության գործի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

4. Թիվ ՍՆԴ/0354/04/24 սնանկության գործով Դատարանը 16.02.2024 թվականի վճռով Դիմողին սնանկ է ճանաչել: Վճռի համաձայն՝ **Դիմողի *«անվամբ ՀՀ, ք. Երևան, Ներքին Շենգավիթ, 1/1 շ., բն.123 հասցեով անշարժ գույքի*** *նկատմամբ գրանցված է* ***ընդհանուր համատեղ սեփականության իրավունք****, որի շուկայական արժեքը կազմում է 14.440.000 ՀՀ դրամ, իսկ յուրաքանչյուր համասեփականատիրոջը հասանելիք 1/3-ական բաժնեմասերինը՝ 4.813.333 ՀՀ դրամ: ...* ***Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշման 1-ի կետով նախատեսված 4.900.000 ՀՀ դրամի և Կարեն Լիպարիտի Բեգլարյանի 1/3-րդ բաժնեմասի արտադրյալը կազմում է 1.633.000 ՀՀ դրամ, իսկ պարտապանի բաժնեմասի արժեքը՝ 4.813.333 ՀՀ դրամ, հետևաբար վերոնշյալ անշարժ գույքում պարտապանի բռնագանձման ենթակա գույքի գումարը կազմում է 3.180.333 ՀՀ դրամ:»:*** ***Նշված փաստը հաստատվում է*** *թիվ ՍՆԴ/0354/04/24 սնանկության գործի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

5. Դիմողը 17.07.2024 թվականի հաղորդագրությամբ Փաստաբանին տեղեկացրել է իր անշարժ գույքի վաճառքի անհրաժեշտության մասին, քանի որ դրա արժեքը գերազանցում է 4.900.000 ՀՀ դրամը, ինչի մասին վերջինս տեղեկացել է սնանկության կառավարչից: Նշվածին ի պատասխան Փաստաբանը հայտնել է. «ճիշտ չի ասում, ես երկրում չեմ, կգամ կխոսենք»: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի բացատրությանը կից ներամադրված նամակագրությամբ:*

6. Փաստաբանը դադարել է պատասխանել Դիմողի նամակներին ու զանգերին 10.12.2024 թվականից: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի բացատրությանը կից*

ներկայացված նամակագրությամբ, ինչպես նաև Փաստաբանի բացատրությամբ:

7. Փաստաբանը իրեն տրված հանձնարարությունը համարել է կատարված Դատարանը 16.02.2024 թվականի վճռի կայացմամբ, որով Դիմողը ճանաչվել է սնանկ: ***Նշված փաստը հաստատվում է*** *Փաստաբանի բացատրությամբ:*

8. Ծառայությունների մատուցումը ավարտված համարելուց հետո Փաստաբանը վերադարձրել է Դիմողին միայն իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը, սակայն չի վերադարձրել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված փաստաթղթերը: ***Նշված փաստը հաստատվում է*** *Փաստաբանի բացատրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքների համաձայն՝ **Գայանե Համլետի Զաքարյանը** փաստաբան է հանդիսանում 20.06.2003 թվականից և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Գայանե Համլետի Զաքարյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2, 3.1.3, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (3) ենթակետերի խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի խախտման համար հարուցված կարգապահական վարույթը՝ կարճման հետևյալ պատճառաբանությամբ՝

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Դիմողն, ըստ էության, Փաստաբանին վերագրում է հանձնարարությունն ընդունելիս հասարակ գրավոր ձևով պայմանագիր չկնքելու, բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, օրենսդրության համապատասխան ճյուղի չիմացության, հանձնարարության կատարման ընթացքի մասին չտեղեկացնելու, պայմանագիրը լուծելիս հանձնարարության կատարման ընթացքում ձեռք բերված կամ իրեն հանձնված

փաստաթղթերը, ինչպես նաև պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք, վստահորդին չվերադարձնելու վարքագիծը:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցին.

- ***արդյո՞ք Փաստաբանն ունեցել է բարձր մասնագիտական պատրաստվածություն և տիրապետել է գործող օրենսդրության պահանջներին,***
- ***արդյո՞ք Փաստաբանը բարեխիղճ իրավական օգնություն է ցուցաբերել Դիմողին,***
- ***արդյո՞ք Դիմողի և Փաստաբանի միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր,***
- ***արդյո՞ք լուծվել է Դիմողի և Փաստաբանի միջև կնքված կնքված պայմանագիրը,***
- ***արդյո՞ք Փաստաբանը հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացրել է Դիմողին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին,***
- ***արդյո՞ք Փաստաբանը պայմանագիրը լուծելիս կամ հանձնարարության կատարումից հրաժարվելիս Դիմողին վերադարձրել է հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել,***
- ***արդյո՞ք Փաստաբանը պայմանագիրը լուծելիս կամ հանձնարարության կատարումից հրաժարվելիս Դիմողին վերադարձրել է հանձնարարության հետ կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը:***

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողների և Փաստաբանների կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը՝ Դիմողի սնանկության գործով, ինչի կապակցությամբ Դիմողը վճարել է Փաստաբանին պահանջված գումարը, սակայն հանձնարարությունն ընդունելիս հասարակ գրավոր ձևով պայմանագիր չի կնքել:

Տրված հանձնարարության շրջանակներում Փաստաբանը կատարել է որոշակի հարցումներ, իսկ դրանց արդյունքներով դիմել է ՀՀ սնանկության դատարան, չնայած Դիմողը տեղեկացրել էր Փաստաբանին, որ հանդիսանում է բնակարանի 1/3 մասի համասեփականատեր:

Թիվ ՍՆԴ/0354/04/24 սնանկության գործով Դատարանը 16.02.2024 թվականի վճռով Դիմողին սնանկ է ճանաչել: Վճռի համաձայն՝ **Դիմողի *«անվամբ ՀՀ, ք. Երևան, Ներքին Շենգավիթ, 1/1 շ., բն.123 հասցեով անշարժ գույքի*** *նկատմամբ գրանցված է* ***ընդհանուր համատեղ սեփականության իրավունք****, որի շուկայական արժեքը կազմում է 14.440.000 ՀՀ դրամ, իսկ յուրաքանչյուր համասեփականատիրոջը հասանելիք 1/3-ական բաժնեմասերինը՝ 4.813.333 ՀՀ դրամ: ...* ***Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշման 1-ի կետով նախատեսված 4.900.000 ՀՀ դրամի և Կարեն Լիպարիտի Բեգլարյանի 1/3-րդ բաժնեմասի արտադրյալը կազմում է 1.633.000 ՀՀ դրամ, իսկ պարտապանի***

բաժնեմասի արժեքը՝ 4.813.333 ՀՀ դրամ, հետևաբար վերոնշյալ անշարժ գույքում պարտապանի բռնագանձման ենթակա գույքի գումարը կազմում է 3.180.333 ՀՀ դրամ:»

Նշվածի արդյունքներով գործով նշանակվել է սնանկության կառավարիչ, իսկ Դիմողի բաժնեմասը գնահատվել է մոտ 4.800.000 մլն ՀՀ դրամ, որը պետք է վաճառվի, չնայած Փաստաբանի պնդմամբ այն չէր կարող վաճառվել: Ստեղծված իրավիճակի մասին Դիմողը 17.07.2024 թվականի հաղորդագրությամբ Փաստաբանին տեղեկացրել է իր անշարժ գույքի վաճառքի անհրաժեշտության մասին, քանի որ դրա արժեքը գերազանցում է 4.900.000 ՀՀ դրամը, ինչի մասին վերջինս տեղեկացել է սնանկության կառավարչից, ինչին ի պատասխան Փաստաբանը հայտնել է. ***«ճիշտ չի ասում, Ես երկրում չեմ, կգամ կխոսենք»:***

Հետագայում Դիմողը փորձել է կապ հաստատել Փաստաբանի հետ, պահանջելով վերադարձել վճարված գումարն ու փաստաթղթերը: Արդյունքում Փաստաբանը վերադարձրել է փաստաթղթերի մասամբ, իսկ 10.12.2024 թվականից դադարել է պատասխանել Դիմողի զանգերին և չի վերադարձրել վճարված հոնորարի մի մասը, այն հիմնավորմամբ, որ ամբողջությամբ մատուցել է ծառայությունները:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.1-ին ենթակետի համաձայն՝ *Փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.1.3-րդ ենթակետի համաձայն՝ *գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, ուշադիր, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին և 3-րդ պարբերության համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝*

վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

...

վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածով պայմանավորված, Օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում են նաև մի շարք այլ պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի բարձր մասնագիտական պատրաստվածություն և օրենսդրության իմացությունը, որի հետ էլ փոխկապակցված է վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պարտականության պատշաճ կատարումը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Այս համատեքստում, վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի վստահորդի փաստաբանի համար սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք ենթակա են կատարման ինչպես հանձնարարության կատարման ընթացքում, այնպես էլ դրա ավարտին՝ մասնավորապես, հանձնարարությունն ընդունելիս վստահորդի հետ կնքել հասարակ գրավոր ձևով պայմանագիր, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին, իսկ պայմանագիրը լուծելուց հետո վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում

իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը, ինչպես նաև ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Ավելին, կնքված պայմանագրի որոշակի առարկայի շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր և արդյունավետ միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար և դրա վերաբերյալ կանոնավորապես տեղեկացնի վերջինիս՝ պատասխանելով նրան հետաքրքրող հարցերին, իսկ պայմանագիրը լուծելիս նաև վերադարձնել ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել:

Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը, անդրադառնալով Փաստաբանին վերագրվող վարքագծում յուրաքանչյուր խախտման մասով առանձին, հարկ է համարում արձանագրել հետևյալը՝

1. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման մասով

Ինչպես արդեն արձանագրվել է, որ փաստաբանի բարձր մասնագիտական պատրաստվածություն և օրենսդրության իմացությունը ուղղակիորեն փոխկապակցված է վստահորդի իրավունքների ու օրինական շահերի բարեխիղճ և արդյունավետ պաշտպանության ապահովման հետ:

Ըստ այդմ, հարկ է նշել, որ ՄԱԿ-ի 1990թ. **«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»**-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, inter alia, **«իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ.Rec(2000)21 հանձնարարականի համաձայն, **փաստաբանները իրենց վստահորդների առջև պարտավոր են ձեռնարկել իրավական գործողություններ իրենց վստահորդի իրավունքները և շահերը պաշտպանելու, հարգելու և իրացնելու ուղղությամբ** (կետ 3(գ)):

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի)՝ Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնակարգի համաձայն՝ **փաստաբանը պետք է իր վստահորդին խորհրդակցի և նրա շահերը ներկայացնի «արագորեն, բարեխղճորեն և ջանասիրաբար», և փաստաբանը պետք է անձնական պատասխանատվություն վերցնի իր վրա վստահորդի հրահանգները կատարելու**

ուղղությամբ, և պետք է իր վստահորդին տեղեկացված պահի այն խնդրի զարգացումների մասին, որը նրան վստահվել է (կետ 3.1.2.):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ փաստաբանների հատուկ դերակատարումը, արդարադատության իրականացման հարցում որպես անկախ մասնագետների, իր մեջ ներառում է մի շարք պարտավորություններ, հատկապես այն դեպքերում, երբ այն վերաբերում է նրանց վարքագծին: Չնայած փաստաբանները ենթակա են սահմանափակումների իրենց մասնագիտական գործունեության մեջ, որոնք պետք է լինեն շրջահայաց, արդար և ազնիվ, նրանք միաժամանակ օգտվում են բացառիկ իրավունքներից և արտոնություններից, (Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 29369/10, ՄԻԵԴ, § 133): Փաստաբանը ոչ միայն պարտավոր է իրավաբանական ներկայացուցչությունը կատարել բարեխղճորեն, այլ նաև իր վստահորդի շահերը պաշտպանել եռանդուն կերպով, որը նշանակում է, որ երբեմն նրանք պետք է որոշում կայացնեն, թե արդյոք նպատակահարմար է առարկել կամ բողոքել դատարանի գործողությունների դեմ (Տե՛ս Մորիս, § 137):

Հանձնաժողովը չի կարող սահմանել այն անհրաժեշտ գործողությունների ծավալը, որը փաստաբանը պարտավոր է կատարել, քանի որ յուրաքանչյուր գործով կարող է այն տարբեր լինել՝ ելնելով տվյալ գործի առանձնահատկություններից և հանգամանքներից: Սակայն գոյություն ունի գործողությունների որոշակի նվազագույն չափ, որը ողջամիտ, անաչառ դիտորդի տեսանկյունից փաստաբանը պարտավոր է կատարել իր վստահորդի կենսական շահերի և հիմնական իրավունքների պաշտպանության ուղղությամբ, ինչը և կվկայի առնվազն փաստաբանի բարեխղճության առերևույթ առկայության մասին: Այս առումով, փաստաբանի մասնագիտական բարեխղճության չափանիշներ է սահմանում Կանոնագրքի 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերը, որոնք նախատեսում են փաստաբանի կողմից վստահորդի հանձնարարության բարեխիղճ կատարման հետևյալ պայմանները՝

1. իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն.

2. վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն.

3. հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Իրավունքի համապատասխան ճյուղի իմացությունը նշանակում է բավարար իրազեկվածություն ոչ միայն իրավունքի տվյալ ճյուղի նորմերի և դրանցով կարգավորվող հասարակական հարաբերությունների վերաբերյալ, այլև դրանք համադրելու, վերլուծելու, դրանցում վստահորդի շահերից բխող բացերի իմացություն, մի քանի իրավական լուծումների մեջ վստահորդի շահերին լավագույնս համապատասխանող լուծման ընտրություն և իրավունքի տվյալ ճյուղից բխող պրակտիկայի իմացություն, այդ թվում իրավասու մարմինների կողմից իրավունքի տվյալ ճյուղի նորմերին տրվող գործնական մեկնաբանության և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրության փաստաբանի պարտականությունը նշանակում է վստահորդի խնդրին առնչվող բոլոր փաստերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հանձնարարությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարման պարտականությունն արդեն վերոնշյալ երկու պարտականություններից ուղղակիորեն հետևող գործողությունների կատարումն է, ինչը ենթադրում է փաստաբանի մոտ վստահորդի խնդրի վերաբերյալ անհրաժեշտ պատկերացման ձևավորում և իրավունքի համապատասխան ճյուղի շրջանակներում դրա լուծման ուրվագծում, վստահորդի շահերի սպասարկման արդյունավետ ուղիների ու եղանակների կանխատեսում, որի հիման վրա փաստաբանը պարտավոր է ձեռնարկել համապատասխան և համարժեք իրավական և փաստացի միջոցներ, որոնք պետք է լինեն իրական և արդյունավետ, այլ ոչ թե ձևական և պատրանքային:

Նշվածի համատեքստում, Հանձնաժողովը գտնում է, որ իրավական օգնություն հայցող անձին ծառայությունների մատուցումը փաստաբանի կողմից չի կարող լինել ինքնանպատակ և փաստաբանից առնվազն պահանջում է այդ անձի իրավունքների ու շահերի լավագույն պաշտպանության տեսանկյունից ողջամիտ և արդյունավետ միջոցներ: Այլ կերպ ասած, փաստաբանը պետք է հաշվի առնի վստահորդի կողմից իրեն տրված հանձնարարության կատարման ենթադրյալ արդյունքի հետևանքները բոլոր փաստական հանգամանքների հաշվառմամբ, նկատի ունենալով և բացահայտելով այն ռիսկերը, որոնք կարող են ի հայտ գալ, օրինակ, այս կամ այն քայլերի կատարման արդյունքում:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը փաստում է, որ Դիմողը դիմել էր Փաստաբանին իր սնանկության գործին ընթացք տալու և, արդյունքում, սնանկ ճանաչվելու համար, տեղեկացնելով Փաստաբանին էական նշանակություն ունեցող փաստի մասին առ այն, որ հանդիսանում է բնակարանի 1/3 մասի համասեփականատերը:

Նշվածի կապակցությամբ Փաստաբանը տվել է պարզաբանում առ այն, որ եթե իր բաժնեմասը 4.900.000 ՀՀ դրամը չի գերազանցի, ապա սնանկության գործի ընթացքում իր բաժնեմասի վրա բռնագանձում չի տարածվի, մինչդեռ Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշման 1-ի կետով սահմանվել է, որ քաղաքացի-պարտապանի **միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումարը կազմում է 4 900 000 դրամ:**

Չնայած այդ հանգամանքին՝ Փաստաբանը ապահովել է Դիմողի սնանկության վարույթի ընթացքը, ինչի արդյունքում թիվ ՍԵԴ/0354/04/24 սնանկության գործով Դատարանը 16.02.2024 թվականի վճռով Դիմողին սնանկ է ճանաչել, արձանագրելով, որ «***Դիմողի «անվամբ ՀՀ, ք. Երևան, Ներքին Շենգավիթ, 1/1 շ., բն.123 հասցեով անշարժ գույքի*** *նկատմամբ գրանցված է* ***ընդհանուր համատեղ սեփականության իրավունք****, որի շուկայական արժեքը կազմում է 14.440.000 ՀՀ դրամ, իսկ յուրաքանչյուր համասեփականատիրոջը հասանելիք 1/3-ական բաժնեմասերինը՝ 4.813.333 ՀՀ դրամ:*

... ***Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշման 1-ի կետով նախատեսված 4.900.000 ՀՀ դրամի և Կարեն Լիպարիտի Բեգլարյանի 1/3-րդ բաժնեմասի արտադրյալը կազմում է 1.633.000 ՀՀ դրամ, իսկ պարտապանի բաժնեմասի արժեքը՝ 4.813.333 ՀՀ դրամ, հետևաբար վերոնշյալ անշարժ գույքում պարտապանի բռնագանձման ենթակա գույքի գումարը կազմում է 3.180.333 ՀՀ դրամ:****»:*

Վերոգրյալից հետևում է, որ Փաստաբանը սխալ է մեկնաբանել Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշման 1-ի կետը և առանց անշարժ գույքի ու Դիմողին պատկանող դրա բաժնեմասի արժեքը հաշվի առնելու դիմել է ՀՀ սնանկության դատարան, ինչի արդյունքում Դիմողին սնանկ ճանաչելուց հետո վերջինիս գույքը վաճառվելու է հրապարակային սակարկություններով՝ Դատարանի 23.06.2025 թվականի որոշմամբ:

Հանձնաժողովը, արձանագրում է, որ Դիմողին սնանկ ճանաչելու գործընթացը նախաձեռնելուց առաջ Փաստաբանը պետք է հաշվի առներ նշվածը, ինչը առնվազն կանխատեսելի էր գործող կարգավորումների ու առկա փաստերի պայմաններում: Այսինքն, եթե Փաստաբանը հաշվի առներ դրանք և Դիմողին նկարագրեր հնարավոր հետևանքները, ապա Դիմողն, իր հերթին, ողջամտորեն կարող էր որոշում կայացնել սնանկ ճանաչվելու և սնանկության դեպքում բնակարանի ու դրա իր բաժնեմասի ճակատագրի վերաբերյալ:

Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ Փաստաբանը իր բացատրությամբ ըստ էության որևէ դեպքում չի հերքել և չի ներկայացրել ապացույց առ այն, որ իրազեկել է Դիմողին այդ հետևանքների մասին, որպես հիմնավորում հայտնելով բացառապես այն, որ փորձառու փաստաբան է և ունի բազմաթիվ գործեր, որոնք ավարտվել են ի օգուտ իր վստահորդներին: Դեռ ավելին, երբ Դիմողը տեղեկացրել է Փաստաբանին սնանկության կառավարչի դիրքորոշման մասին, Փաստաբանը պատասխանել է՝ «ճիշտ չի ասում, Ես երկրում չեմ, կգամ կխոսենք», ինչն առնվազն վկայում է այն մասին, որ Փաստաբանը համոզված է եղել իր ընտրած մարտավարության հարցում:

Նման պայմաններում, Հանձնաժողովը փաստում է, որ չնայած Փաստաբանը Դիմողի անունից դիմել է ՀՀ սնանկության դատարան, իսկ Դիմողը այդ կապակցությամբ ճանաչվել է սնանկ, այնուամենայնիվ, սույն կարգապահական գործում առկա հանգամանքների հաշվառմամբ, նշված օգնությունը բարեխղճության տեսանկյունից առնվազն վիճահարույց է, քանի որ Դիմողը զրկվել է անշարժ գույքի իր բաժնեմասից, ինչը բացասական հետևանք է առաջացրել Դիմողի համար, ինչի մասին առնվազն տեղեկացված չի եղել:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի ու Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ փաստաբան Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները**:

2. Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջների խախտման մասով

Հանձնաժողովը, անդրադառնալով փաստաբանի և վստահորդի միջև ծավալվող իրավահարաբերություններում որոշակիության և կանխատեսելիության ապահովման անհրաժեշտությանը, արձանագրում է, որ պետք է լինեն համապատասխան երաշխիքներ նրանցից յուրաքանչյուրի համար, որպիսի պայմաններում էլ կարկտվում է հրապարակն

օգնություն ցույց տալու մասին հասարակ գրավոր ձևով պայմանագրի կնքման նշանակությունը, ուր հստակ արտացոլվում է դրա առարկան:

Նկատի ունենալով այն, որ փաստաբանին տրված հանձնարարությունը կարող է հստակ կանխորոշվել հենց պայմանագրի առարկայով Կանոնագրքի մի շարք դրույթների կարգավորումներ գտնվում է դրա հետ անմիջական կապի մեջ, ինչպիսին է օրինակ՝ բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու կամ պայմանագիրը լուծելիս հոնորարի մի մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք, վերադարձնելու պահանջները:

Այս համատեքստում, քննարկելով Փաստաբանին վերագրվող վարքագիծը, Հանձնաժողովը փաստում է, որ Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց Դիմողի հետ պայմանագրի կնքման փաստը հաստատված համարելու համար, որպիսի փաստի ապացուցման պարտականությունը կրում էր հենց Փաստաբանը, ինչը բավարար է այդ խախտման հատկանիշների առկայությունը հաստատված համարելու համար:

Բացի այդ, Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ նաև Փաստաբանի պնդմանն առ այն, որ ինքը «պայմանագիրը և գործի հետ կապված փաստաթղթերը պահում է մեկ տարի»:

Ըստ այդմ, հարկ է արձանագրել, որ **Կանոնագրքի 2.11.2 ենթակետի համաձայն՝** *Փաստաբանական գործի պահպանման նվազագույն ժամկետը սահմանվում է **երեք տարի՝ գործի ավարտից հետո:** Փաստաբանական գործը կարող է պահվել էլեկտրոնային եղանակով:*

Նշվածով հստակ սահմանվում է այն նվազագույն ժամկետը, որի հաշվառմամբ Փաստաբանը պարտավոր էր պահպանել փաստաբանական գործը և պայմանագիրը, մինչդեռ չի կատարել հիշյալ պահանջը: Ավելին, Հանձնաժողովը ուշագրավ է համարում այն փաստը, որ նույնիսկ եթե Փաստաբանը պահպանում էր պայմանագիրը մեկ տարի, ապա նա առնվազն պետք է մատնանշեր, թե որ պահից է սկսում հաշվարկել փաստաթղթի պահպանման ժամկետը, հակառակ դեպքում ստացվում է, որ Հանձնաժողովը բացառապես Փաստաբանի պնդմամբ առաջնորդվելու արդյունքում, առանց որոշակի ապացույցի առկայության, պետք է հաստատված համարի փաստն առ այն, որ Փաստաբանը կնքել է Դիմողի հետ իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագիր:

Հետևապես, առնվազն անհասկանալի է, որ թե ինչու Փաստաբանը չի ներկայացրել այդ պնդումը կամ առկա ապացույցները մինչ այդ, հաշվի առնելով, որ Դիմողը Պալատին փաստացի դիմել էր դեռևս 11.02.2025 թվականին, որի կապակցությամբ Փաստաբանն իր դիրքորոշումից բացի որևէ ապացույց չի ներկայացրել Պալատին, իսկ թիվ ՍՆԴ/0354/04/24 սնանկության գործով 16.02.2024 թվականի վճիռը «datalex» դատական տեղեկատվական համակարգում հրապարակվել է 26.02.2024 թվականին: Նշվածը ըստ էության թույլ է տալիս եզրակացնել, որ առնվազն վճիռը ստանալուց հետո Փաստաբանը պետք է պահպաներ այն ողջ գործի հետ միաժամանակ իր իսկ պնդման համաձայն մեկ տարի՝ մինչև 26.02.2025 թվականը:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի ու Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ,

գտնում է, որ փաստաբան Փաստաբանի վարքագծում **առկա է Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները**:

3. Կանոնագրքի 3.6.1 ենթակետի պահանջների խախտման մասով

Անդրադառնալով վստահորդի հանձնարարության կատարման ընթացքում նրա իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի փաստաբանի կողմից կատարման ենթակա այլ պարտականություններին, Հանձնաժողովն արձանագրում է, որ փաստաբանը նաև պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Այս կապակցությամբ Հանձնաժողովը փաստում է, որ Դիմողի կողմից ներկայացված նամակագրությունից հետևում է, որ թիվ ՍՆԴ/0354/04/24 սնանկության գործով Դատարանի 16.02.2024 թվականի վճռի կայացումից հետո՝ 17.07.2024 թվականին Դիմողը փորձել է կապ հաստատել Փաստաբանի հետ և քննարկել բնակարանի իր բաժնեմասի օտարման հարցի առանձնահատկությունները, ինչի կապակցությամբ Փաստաբանը պատասխանել է «ճիշտ չի ասում, ես երկրում չեմ, կգամ կխոսենք», իսկ Դիմողի հարցին «բա ես կառավարչին ինչ ասեմ» Փաստաբանը պատասխանել է «ասա սպասի փաստաբանս գա»:

Նշվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ Փաստաբանը պարտավորվել էր կատարել որոշակի գործողություններ՝ Դիմողին հետաքրքրող հարցերը պարզաբանելու ուղղությամբ, սակայն ինչպես հետևում է 10.12.2024 թվականի նամակագրությունից Դիմողի հետագա զանգերն ու հաղորդագրությունները մնացել են անպատասխան:

Այս համատեքստում, Հանձնաժողովը հարկ է համարում նաև արձանագրել, որ Փաստաբանը ըստ էության տվել է միմյանց հակասող պնդումներ: Մասնավորապես, Փաստաբանը մի դեպքում պնդում է, որ չուներ պարտավորություն Դիմողի զանգերին ու հաղորդագրություններին պատասխանել, քանի որ սնանկության գործով վճռի կայացմամբ նրա ծառայությունները համարվում էին մատուցված: Միաժամանակ, Փաստաբանը պնդում է, որ պայմանագիրը չի լուծվել և ինքը չի հրաժարվել հանձնարարության կատարումից:

Առկա իրավիճակում Փաստաբանի դիրքորոշումն անորոշ և հիմնավոր չի դիտարկվում՝ հաշվի առնելով այն, որ եթե Դիմողի կողմից տրված հանձնարարությունը սահմանվակված էր միայն սնանկության դատարան դիմումի ներկայացմամբ ու սնանկության գործընթացի ավարտի ապահովմամբ, ապա մատուցված ծառայությունն իրեն սպառում է, իսկ պայմանագրի կնքված լինելու դեպքում այն կհամարվեր լուծված: Մյուս կողմից, եթե այդ հաշվառմամբ Փաստաբանը վճռի կայացումից չի հրաժարվել հանձնարարության կատարումից, ապա ծառայությունները դեռևս ենթակա էին մատուցման:

Ըստ այդմ, Հանձնաժողովը առավելապես հարկ է համարում ուշադրությունը կենտրոնացնել վճռի կայացումից հետո Դիմողի և Փաստաբանի միջև առկա նամակագրության ու դրա բովանդակության վրա, որից հետևում է, որ Փաստաբանը պարտավորվել էր կատարել Դիմողի սնանկության գործի որոշակի ուսումնասիրություն և

այդ կապակցությամբ կապ հաստատեր վերջինիս հետ, որպիսի ակնկալիքը ձևավորվել էր Դիմողի մոտ հենց Փաստաբանի խոսքերից ելնելով, սակայն Փաստաբանը չի կատարել իր պարտականությունն այդ մասով: Ընդ որում, նշված պարտավորությունը իր էությամբ ուղղակիորեն չէր բխում Դիմողի կողմից ի սկզբանե տրված հանձնարարությունից, որը փաստացի ավարտվել էր վճռի կայացմամբ:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի ու Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ փաստաբան Փաստաբանի վարքագծում **առկա է Կանոնագրքի 3.6.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները**:

4. Կանոնագրքի 3.8.4 ենթակետի 1 և 3 պարբերությունների պահանջների խախտման մասով

Անդրադառնալով այն պարտականություններին, որոնք ենթակա են կատարման հանձնարարության կատարման ավարտին՝ պայմանագիրը լուծելիս, Կանոնագիրքը սահմանել է առանձին կարգավորում, որի հաշվառմամբ, փաստաբանը պարտավոր է կատարել որոշակի գործողություններ պայմանագիրը լուծելիս, մասնավորապես՝ վստահորդին վերադարձնել, ի թիվս այլնի՝

- պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ,
- վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը:

Սույն գործում առկա ապացույցների ու հաստատված փաստերի հաշվառմամբ, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ Դիմողի և Փաստաբանի միջև իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագրի կնքման փաստը հավաստող ապացույցի բացակայության պայմաններում, Հանձնաժողովը չի կարող քննարկել հարցն առ այն, թե ի սկզբանե Դիմողի կողմից տրված հանձնարարությունն ինչ ծավալ է ունեցել, հաշվի առնելով, որ Դիմողի ու Փաստաբանի բացատրություններից հետևում է, որ Փաստաբանը պարտավոր էր առնվազն ապահովել Դիմողի սնանկության գործի ընթացքը:

Հետևապես, տրված հանձնարարությունից բխող ծառայությունները մատուցված լինելու և Դիմողին վճռի հիման վրա սնանկ ճանաչված լինելու դեպքում, Հանձնաժողովը չի կարող պարզել այն աշխատանքները, որոնք տրված հոնորարի շրջանակներում կատարված չեն:

Միաժամանակ, ինչ վերաբերում է Դիմողի սնանկության գործի ուսումնասիրությանը, Հանձնաժողովը նախորդ կետի շրջանակներում արդեն իսկ արձանագրել է, որ այն ուղղակիորեն չէր բխում Դիմողի կողմից ի սկզբանե տրված հանձնարարությունից, ինչի հաշվառմամբ էլ այդ մասով լրացուցիչ գումար Փաստաբանին չէր էլ վճարվել:

Հաջորդիվ, Հանձնաժողովը, անդրադառնալով հանձնարարության կատարման ընթացքում ձեռք բերված կամ իրեն հանձնված փաստաթղթերը Դիմողին

չվերադարձնելու հարցին, հարկ է համարում արձանագրել, որ Փաստաբանը, իր բացատրության համաձայն՝ Դիմողին փաստացի վերադարձրել է իր կողմից ձեռք բերված փաստաթղթերի պատճենները, իսկ այն փաստաթղթերը՝ բանկի քաղվածքները, Դիմողի և իր կնոջ անձնագրերի, ամուսնության վկայականի պատճենները չի վերադարձրել անհրաժեշտության բացակայությամբ պայմանավորված, որպիսի պայմաններում ստացվում է, որ Փաստաբանն ընդունում է փաստաթղթերի մնացած մասով Դիմողին չվերադարձնելու փաստը:

Հանձնաժողովը, կրկին անգամ չանդրադառնալով փաստաբանական գործի պահպանման ժամկետներին և փաստաթղթերը վերադարձնելու պահանջներին, արձանագրում է, որ Փաստաբանը ցանկացած դեպքում պարտավոր էր ամբողջությամբ վերադարձնել դրանք Դիմողին՝ չքննարկելով դրանք վերադարձնելու անհրաժեշտության ծագած լինելու կամ չլինելու հարցը:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի ու Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ փաստաբան Փաստաբանի վարքագծում **առկա է Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 3-րդ պարբերության պահանջների խախտման հատկանիշները**, իսկ **3.8.4-րդ ենթակետի**

1-ին պարբերության պահանջների խախտման մասով բացակայում են դրա առերևույթ հատկանիշները, որպիսի պայմաններում էլ այս մասով հիմնավորված չէ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը,*

մեղքի ասպիճանը, առկա փոյժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ փոյժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված փոյժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի

ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի աստիճանը

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում Դիմողին իրավունքների ու շահերի պաշտպանությունը ստանձնելուց հետո Փաստաբանը հետամուտ է եղել Դիմողի սնանկության գործին ընթացք տալուն, տեղյակ լինելով այն փաստի մասին, որ Դիմողը հանդիսանում է բնակարանի 1/3 մասի համասեփականատերը: Նշվածի կապակցությամբ Փաստաբանը տվել է պարզաբանում առ այն, որ եթե Դիմողի բաժնեմասը 4.900.000 ՀՀ դրամը չի գերազանցի, ապա սնանկության գործի ընթացքում իր բաժնեմասի վրա բռնագանձում չի տարածվի, մինչդեռ Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշման 1-ի կետով սահմանվել է, որ քաղաքացի-պարտապանի **միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումարը կազմում է 4 900 000 դրամ:** Վերոգրյալից հետևում է, որ Փաստաբանը սխալ է մեկնաբանել Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017 թվականի թիվ 808-Ն որոշման 1-ի կետը և առանց անշարժ գույքի ու Դիմողին պատկանող դրա բաժնեմասի արժեքը հաշվի առնելու դիմել է ՀՀ սնանկության դատարան, ինչի արդյունքում Դիմողին սնանկ ճանաչելուց հետո վերջինիս գույքը վաճառվել է հրապարակային սակարկություններով՝ Դատարանի 23.06.2025 թվականի որոշմամբ, ինչը հանդիսացել է Փաստաբանի կոպիտ անփութության արդյունքում, հաշվի առնելով, որ Փաստաբանը, նույնիսկ նորմի սխալ մեկնաբանման պայմաններում, պարտավոր էր կանխատեսել հնարավոր ռիսկերը:

Կարգապահական խախտման հետևանքները

Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Փաստաբանն իրեն մեղսագրվող արարքը կատարելով գործել է ի վնաս իր վստահորդ՝ Դիմողի, ում շահերի պաշտպանությունը ստանձնել և պարտավորվել էր իրականացնել: Արդյունքում, նորմի սխալ մեկնաբանման արդյունքում, Դիմողը սնանկ ճանաչվելուց հետո զրկվել է բնակարանի իր բաժնեմասից, որը վաճառվել է հրապարակային սակարկություններով՝ Դատարանի 23.06.2025 թվականի որոշմամբ, այն դեպքում, երբ չէր ցանկանում նման հետևանք, ինչի մասին Փաստաբանը տեղեկացված է եղել ի սկզբանե:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առնում՝ փաստաբան Գայանե Համլետի Զաքարյանի անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում նաև կարգապահական տույժերի բացակայությունը, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.1-ին հոդվածի 5-րդ մասը, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-

ին կետի, 8-րդ մասի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Գայանե Համլետի Զաքարյանի (արտոնագիր՝ թիվ 432) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» և «Մնանկության վարույթի առանձնահատկությունները» թեմաներով, յուրաքանչյուրը 4-ական ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2, 3.1.3, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (3) ենթակետերի խախտման համար:

2. Փաստաբան Գայանե Համլետի Զաքարյանի նկատմամբ Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-25063 կարգապահական վարույթը կարճել:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25063-2-Ա
11 հունիսի 2025թ.
ք.Երևան